Դաստակերտ

Բնակչություն՝ 587

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 127 կմ
Հեռավորությունը Երևան քաղաքից՝ 236 կմ
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2050մ
Քաղաքի կարգավիճակ ստանալու տարեթիվը՝ 1995թ.

Դաստակերտը գտնվում է Այրի լեռան ստորոտին, նույնանուն գետի ակունքի մոտ: Ունի բարձր լեռնային բնակավայրի կարգավիճակ:
Անվանվել է նաև Դաստակերն, Դաստակյուրդ: Մտել է Սյունիք նահանգի Ծղուկ գավառի մեջ: Հիշատակվում է 12-13-րդ դարերից՝ Ստեփանոս Օրբելյանի կողմից: Հնում սովորական գյուղ էր: Ըստ Տաթևի վանքի հին հարկացուցակի գյուղի հարկը կազմում էր 10 միավոր:
Քաղաքատիպ ավան է համարվում 1951թ-ից և այդ ժամանակներից էլ սկսում է ավանի երկրորդ կենսագրությունը, երբ տարածքում 1952թ. կառուցվում է պղնձամոլիբդենային կոմբինատ:
Բնակավայրից 2կմ հյուսիս Վարդապետ քար կոչված ժայռաբեկորի վրա կա վիմագիր արձանագրություն:

Կրթություն, մշակույթ, առողջապահություն

Դաստակերտում գործում է մեկ միջնակարգ դպրոց, մշակույթի տուն, երաժշտական դպրոց, գրադարան:
Բուժսպասարկումն իրականացվում է «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ կողմից:

Տնտեսությունը

Դաստակերտի մոտ գտնվող պղնձամոլիբդենային հանքավայրի հիման վրա կառուցվել է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի մասնաճյուղը՝ իր հարստացուցիչ ֆաբրիկայով, որը 1990-ական թթ. տնտեսական ճգնաժամի պատճառով առ այսօր չի գործում:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 4205 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 4138 հա, որից՝
- վարելահող՝ 35 հա, խոտհարք՝ 17 հա, արոտ՝ 2233 հա, այլ հողատեսք՝1853 հա
- բնակավայրերի հողեր՝ 54 հա,
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝3 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 1 հա,
- ջրային հողեր՝ 8 հա